ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԶՈՎՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

---

28. 06.2012թ.

N 43

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ
ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

Ձեզ ենք ներկայացնում Զովք համայնքի 18.06.2012թ-ին տեղի ունեցած համայնքային հաշվետու ժողովի արձանագրությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Զովք գյուղական համայնքի հաշվետու համայնքային ժողովի
18. 06. 2012թ.
2012թ-ի հունիսի 18-ին տեղի է ունեցել Զովք համայնքի հաշվետու համայնքային ժողովը:
Մասնակցությամբ՝
Համայնքի ավագանու անդամներ՝

Ֆ. Պողոսյան
Ա . Գևորգյան
Է. Միլիտոսյան
Ֆ. Միլիտոսյան
Հ. Գալստյան
Ա. Բարսեղյան
Մ. Ներսիսյան

Համայնքի ղեկավարի աշխատակազմից՝

Ա. Գևորգյան
Ա. Ալոյան
Կ.Գևորգյան
Ն.Գևորգյան
Ա.Առաքելյան
Հ. Գալստյան

ԵՎ համայնքի բազմաթիվ բնակիչներ

ՕՐԱԿԱՐԳ

1.Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկման մասին:
2. Ընթացիկ հարցերի քննարկում:
3. Համայնքի առկա խնդիրների և ծրագրերի մասին:

Լսեցին՝

Համայնքի ղեկավար Թ.Հովհաննիսյանը նշեց համայնքում կատարված և կատարվելիք աշխատանքների մասին:
Նա տեղեկացրեց, որ համայնքի բյուջեի կատարողականը հնարավորություն է տվել համայնքի քառամյա ծրագրի որոշ կետերի կատարմանը:
Մասնավորապես կատարվել է համայնքի կենտրոնական փողոցների գիշերային լուսավորությունը:
Համայնքի միջոցներով կատարվում է կանոնավոր աղբահանություն:
Կատարվել է նոր թաղամասի էլեկտրաֆիկացում:
Համայնքում կառուցվում է սպորտի և մշակույթի տուն:
Նախատեսվում է համայնքային ենթակայության ճանապարհների ասֆալտապատման և փոսերի հիմնանորոգման աշխատանքներ:
Առաջարկություններով ելույթ ունեցան համայնքի բնակիչներ:

Ելույթներ

Կատարվող և կատարվելիք աշխատանքների մասին ելույթ ունեցավ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ա. Գևորգյանը:
Նա նշեց, որ առաջնահերթ լուծում պահանջվող հիմնախնդիրներից է ճանապարհների վերանորոգումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ